ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

8 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Կապանի «Նորոգշին» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության Ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Կապանի «Նորոգշին» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք հաստատվել ենք Ընկերության աուդիտորներ 2024թ. մայիսի 6-ին և չենք հետևել տարեվերջի պաշարների գույքագրման փաստացի գործընթացին: Մենք ի վիճակի չենք եղել այլընտրանքային միջոցներով ձեռք բերել ապացույցներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ առկա մնացորդների վերաբերյալ, որը հաշվետվու ամսաթվի դրությամբ կազմում է 733,473 հազ. դրամ:

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում:
Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել, և մենք կարծիք չենք հայտնում այդ ֆինանսական հաշվետվությունների համեմատական տեղեկատվության վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
31 հուլիսի, 2024թ.
Ք. Երևան, Վաղարշյան 12

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,927,388	2,222,792
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	5	150,723	-
Ոչ նյութական ակտիվներ		264	291
Տրված կանխավճարներ		24,104	4,979
Հետաձգված հարկային ակտիվներ		17,339	18,661
		2,119,818	2,246,723
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	733,473	585,665
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	610,458	415,326
Տրված փոխառություններ		31,593	24,180
Դրամական միջոցներ	8	735,492	472,400
		2,111,016	1,497,571
Ընդամենը ակտիվներ		4,230,834	3,744,294
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	9	6,880	6,880
Կուտակված շահույթ		582,337	337,249
		589,217	344,129
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերվող շնորհներ		5,800	8,161
Ֆինանսական վարձակալություն	10	67,421	-
		73,221	8,161
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		-	5,455
Ֆինանսական վարձակալություն	10	38,841	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	3,496,149	3,364,137
Շահութահարկի գծով պարտավորություն		33,406	22,412
		3,568,396	3,392,004
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		4,230,834	3,744,294

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. հուլիսի 31-ին՝

Տնօրեն

Ռազմիկ Փարսյան

Գլխավոր հաշվապահ

Սուսաննա Համբարձումյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Իրացումից հասույթ	12	3,954,244	3,139,602
Վաճառքի ինքնարժեք	14	(3,194,717)	(2,601,226)
Համախառն շահույթ		759,527	538,376
Այլ եկամուտ	13	29,551	85,010
Իրացման ծախսեր		-	-
Վարչական ծախսեր	15	(256,933)	(236,061)
Այլ ծախսեր	16	(85,182)	(149,722)
Գործառնական գործունեությունից օգուտ		446,963	237,603
Ֆինանսական ծախս	17	(2,406)	(1,503)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	18	(8,832)	11,531
Շահույթ մինչև հարկերը		435,725	247,631
Շահութահարկի գծով ծախս	19	(90,637)	(49,217)
Տարվա շահույթ		345,088	198,414
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		345,088	198,414

.
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	6,880	338,835	345,715
Տարվա շահույթ	-	198,414	198,414
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	198,414	198,414
Շահաբաժիններ	-	(200,000)	(200,000)
2022թ. դեկտեմբերի 31 դրությամբ	6,880	337,249	344,129
Տարվա շահույթ	-	345,088	345,088
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	345,088	345,088
Շահաբաժիններ	-	(100,000)	(100,000)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,880	582,337	589,217

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը։

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	345,088	198,414
Ճշգրտումներ՝		
Շահութահարկի գծով ծախս	90,637	49,217
Մաշվածության ծախս	477,134	391,197
Շնորհից եկամուտ	(2,361)	(2,361)
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	(292)	-
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը	8,832	(11,531)
Ֆինանսական ծախս	2,406	1,503
Գործառնական օգուտ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	921,444	626,439
Պաշարների փոփոխություն	(147,808)	312,329
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(195,132)	322,642
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	124,647	109,057
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	703,151	1,370,467
Վճարված տոկոս	(2,406)	(1,503)
Վճարված շահութահարկ	(78,321)	(76,068)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	622,424	1,292,896
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրամադրված փոխառություններ, զուտ	(7,413)	(19,330)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, զուտ	(332,134)	(794,835)
Տրված կանխավճարներ	(19,125)	60,794
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(358,672)	(753,371)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահաբաժինների վճարում	(100,000)	(200,000)
Փոխառություններ	(5,455)	2,548
ֆինանսական վարձակալությունից մուտքեր, զուտ	104,961	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(494)	(197,452)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	263,258	342,073
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(166)	(152)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	472,400	130,479
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	735,492	472,400

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Կապանի «Նորոգշին» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ «Ընկերություն») համարվում է շահույթ ստանալու նպատակով մեկ անձի կողմից հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Ընկերության հիմնադիրը և (կամ) մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
Ընկերությունը ստեղծվել է «Կապանի «Նորոգշին» Բաց Բաժնետիրական Ընկերության (գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 03.06.1998թ. գրանցման թիվ՝ 27.130.00844, վկայական՝ 01Ա041382) վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«Կապանի «Նորոգշին» բաց բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 12.12.1997թ. թիվ 574 որոշման համաձայն՝ «Կապանի «Նորոգշին» պետական ձեռնարկության բաժնետոմսերը մասնավորեցնելով ազատ բաժանորդագրության միջոցով՝ վերակազմավորվելով «Կապանի «Նորոգշին» բաց բաժնետիրական ընկերության, որը հանդիսանում է նրա իրավահաջորդը:

Ընկերությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2008թ. հոկտեմբերի 02-ին: Ընկերության գրանցման համարն է 27.110.01555:
Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս ոչ ուշ, քան չորս ամիս անց: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության միակ մասնակիցն է Ռազմիկ Փարսյանը՝ 100% բաժնեմասով:

2023թ. Ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 247 մարդ:

Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ. Հարությունյան փող. թիվ 1ա/5:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և, որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.6 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.
բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.
գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.
դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:
ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.50	5.59
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.90	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչմանը, չափվում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է:

Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հողամասեր	20 տարի
Շենքեր և շինություններ (կառուցվածքներ)	20 տարի
Կառուցվածքներ	4-20 տարի
Փոխանցող հարմարանքներ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-8 տարի
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	1-8-տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են լիցենզիաները և թույլտվությունները, արտոնագրերը, ապրանքային նշանը, համակարգչային ծրագրերը և այլն, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:
Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

3.4 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն բոլոր այն դեպքերում, երբ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են Ընկերությանը: Բոլոր այլ վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները վարձակալության սկզբի դրությամբ ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքով (կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե այն ավելի ցածր է): Վարձատուի համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:
Վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության պարտականության նվազեցման միջև այնպես, որպեսզի ստացվի հաստատուն դրույք՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները հանվում են շահույթը կամ վնասը չափելիս: Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները ներառվում են հիմնական միջոցներում և մաշեցվում են ու արժեզրկումից կորստի գծով գնահատվում են այնպես, ինչպես սեփականության իրավունքով պահվող ակտիվները:
Գործառնական վարձակալության գծով վճարման ենթակա վարձավճարները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ գծային հիմունքով, համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում:

3.6 Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:
Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:
Վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները, պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են վերամշակելու ընթացքում:
Այլ ծախսումները ինքնարժեքում ներառվում են այն չափով, ինչքանով դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:
Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը Մուտք՝ Առաջինը Ելք» (ԱՄԱԵ) մեթոդով:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում գերնորմատիվային ծախսումները, պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները և վաճառքի ծախսումները:

Պաշարները հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար մինչև իրացման զուտ արժեք և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք տեղի են ունեցել:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ

պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:
Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):
Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝
ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.
բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:
Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝
բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:
Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝
բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝
-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝
-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.8 Հասույթ

Ընկերությունը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Ընկերությունը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը պետք է ճանաչի, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.
գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.
ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:
Ընկերության հասույթը հիմնականում առաջանում է շինարարական աշխատանքներից և բետոնի իրացումից:

3.9 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Ընկերության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.
ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.
բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.
գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.
դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝
- ընկերության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.10 Ֆինանսական գործիքներ

Քաղաքականության ընտրություն
Հիմնական ֆինանսական գործիքների նկատմամբ Ընկերությունը կիրառում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի 11-րդ և 12-րդ բաժինների պահանջներն ամբողջությամբ:
Հիմնական ֆինանսական գործիքներ են, մասնավորապես, առևտրական դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները, տրամադրված և ստացված փոխառությունները, վարկերը:

Սկզբնական ճանաչում

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Սկզբնական չափում

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, այն չափվում է գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, բացի այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով), բացառությամբ եթե համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ կամ գործարքի կողմ հանդիսացող կազմակերպություններից մեկի մոտ առաջացնելով ֆինանսական պարտավորություն, կամ

կոնտրագենտի մոտ՝ ֆինանսական ակտիվ: Համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, եթե վճարումը հետաձգվում է ավելի, քան սովորական գործունեության համար ընդունված ժամկետները, օրինակ՝ ապրանքների իրացման նպատակով գնորդին տրամադրվում է հետաձգված անտոկոս վճարումների իրավունք (անտոկոս կրեդիտավորում) կամ ֆինանսավորվում է մի տոկոսադրույքով, որը շուկայական տոկոսադրույք չէ, օրինակ՝ աշխատողին տրամադրվում է անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ: Եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ զեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով, որը որոշվել էր սկզբնական ճանաչման պահին:

Հետագա չափում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ առանց հանելու գործառնության հետ կապված որևէ ծախսում, որը Ընկերությունը կարող է կրել վաճառքի կամ այլ օտարման դեպքում:

Որպես ընթացիկ ակտիվներ կամ ընթացիկ պարտավորություններ դասակարգված պարտքային գործիքները չափվում են դրամական միջոցների կամ այլ չզեղչված գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի կամ կստացվի (այսինքն՝ արժեզրկումը հանած), բացառությամբ եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի:

Ամորտիզացված արժեք և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստորև նշվածների զուտ գումարն է՝

ա) գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին,

բ) հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ,

գ) գումարած կամ հանած սկզբնական ճանաչման գումարի և մարման միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով,

դ) հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով նվազեցում (ուղղակիորեն կամ կարգավորող հաշիվների օգտագործման միջոցով):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն զեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքը ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով.

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական գործիքների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված որևէ ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը անմիջապես ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողի ուշադրությանն արժանացած դիտարկելի տվյալները՝ հետևյալ կորդտի դեպքերի վերաբերյալ՝

ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները,

բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը,
գ) պարտապանի ֆինանսական դժվարությունների հետ կապված՝ տնտեսական կամ իրավական պատճառներով, պարտատիրոջ կողմից պարտապանին զիջումների տրամադրումը, որը այլապես պարտատերը չէր նախատեսի,
դ) հավանական է դարձել, որ պարտապանը կսնանկանա կամ կենթարկվի այլ ֆինանսական վերակազմավորման,
ե) դիտարկելի տվյալներ, որոնք վկայում են, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշակիացնել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով:

Չափում
Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստը ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված՝ գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև եղած տարբերությունն է: Եթե այդպիսի ֆինանսական գործիքն ունի փոփոխուն տոկոսադրույք, արժեզրկումից կորուստը չափելու նպատակով զեղչման դրույքը պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է:
Եթե հետագա որևէ ժամանակաշրջանում կորստի գումարը նվազում է, և նվազումը կարող է օբյեկտիվորեն կապված լինել արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած որևէ դեպքի հետ, ապա Ընկերությունը հակադարձում է նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը կամ ուղղակիորեն, կամ կարգավորող հաշիվը ճշգրտելու միջոցով: Հակադարձումը չպետք է հանգեցնի այն բանին, որ ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը (բոլոր կարգավորող հաշիվները հանած) գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կլիներ եթե նախկինում արժեզրկումը ճանաչված լիներ: Հակադարձման գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում
Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բորոլ էական ռիսկերն ու պարգևատրումները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:
Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում
Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Առևտրական դեբիտորական պարտքեր
Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքներով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային

արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն՝ եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:
Արտարժույթով արտահայտված առևտրական դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելու հաշվետու ամսաթվի դրությամբ գործող պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելու հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ վնասները ճանաչվում են շահություն կամ վնասում:

Տրված փոխառություններ
Տրված փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են:
Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է
- սեփական կապիտալուում, եթե ֆինանսական ակտիվը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմկաերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը այլ կողմերի գծով է:

Դրամական միջոցների և դրանց համարժեքներ
Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշետվությունում՝ պարտավորությունում:

Առևտրական կրեդիտորական պարտքեր
Սկզբնական ճանաչման պահին առևտրական կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքի, երբ կրեդիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Այն դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:
Ստացված վարկեր և փոխառություններ
Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:
Սկզբնապես ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է
- որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը բաժնետերերի ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական պարտավորությունը այլ կողմերի գծով է:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում
Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են զուտ գումարով այն դեպքում, երբ Ընկերությունը՝

ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և

բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմքունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

4 Հիմնական միջոցներ

հազար դրամ	Հողամասեր	Շենքեր և շինություններ (կառուցվածքներ)	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադ-ական գույք, տնտեսա-կան գույք, գործիքներ	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	15,111	184,641	2,911	2,273,233	22,038	475,034	3,842	2,976,810
Ավելացում, կապիտալացում	8,100	45,032	-	181,954	10,482	554,521	507	800,596
Ներքին շարժեր, Վերադասակարգում	13,503	170,749	-	2,822	(2,822)	(177,624)	-	6,628
Օտարում	-	-	-	-	-	(12,646)	-	(12,646)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,714	400,422	2,911	2,458,009	29,698	839,285	4,349	3,771,388
Ավելացում, կապիտալացում	-		-	219,673	8,483	335,303	-	563,459
Ներքին շարժեր, Վերադասակարգում	-	560,086	-	219,998	-	(1,164,432)	-	(384,348)
Օտարում, դուրսգրում	-	-	-	(3,543)	(4,189)	-	(191)	(7,923)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,714	960,508	2,911	2,894,137	33,992	10,156	4,158	3,942,576
Կուտակված մաշվածություն								
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	108,389	427	1,037,308	10,065	-	1,495	1,157,684
Տարվա ծախս	-	16,120	145	371,331	2,947	-	626	391,169
Օտարում, վերադասակարգում	-	(222)	-	1,417	(1,452)	-		(257)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	124,287	572	1,410,056	11,560	-	2,121	1,548,596
Տարվա ծախս	-	25,793	146	444,448	3,762	-	366	474,515
Օտարում, վերադասակարգում	-	-	-	(3,730)	(4,002)	-	(191)	(7,923)
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	150,080	718	1,850,774	11,320	-	2,296	2,015,188
Հաշվեկշռային արժեք								
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,714	276,135	2,339	1,047,953	18,138	839,285	2,228	2,222,792
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,714	810,428	2,193	1,043,363	22,672	10,156	1,862	1,927,388

Մաշվածության գծով ծախսը 2023թ. կազմել է 474,515 հազ.դրամ:
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 173,588 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

Ընկերությունը ունի գրավադրված հիմնական միջոցներ:
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում ունի հետևյալ գրավները՝

Պայմանագիր	Անվանում	Գումար	Պայմանագրի գումար	Պայմ.տիպ	Կնքման ամս.
G20-041787	Կապանի «Նորոգշին» ՍՊԸ	189,000,000	189,000,000	Անշարժ գույք	22/07/20
G20-042066	Կապանի «Նորոգշին» ՍՊԸ	36,400,000	36,400,000	Անշարժ գույք	22/07/20
G20-042072	Կապանի «Նորոգշին» ՍՊԸ	100,800,000	100,800,000	Անշարժ գույք	22/07/20
G20-042067	Կապանի «Նորոգշին» ՍՊԸ	120,600,000	120,600,000	Անշարժ գույք	22/07/20

5 Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ

հազար դրամ	Լիզինգ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Ավելացում, կապիտալացում	153,314	153,314
Օտարում, դուրսգրում	-	-
Վերադասակարգում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	153,314	153,314
Կուտակված մաշվածություն		
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Տարվա ծախս	2,591	2,591
Օտարում	-	-
Վերադասակարգում	-	-
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,591	2,591
Հաշվեկշռային արժեք		
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	150,723	150,723

6 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	5,220	8,139
Վառելիք	2,724	1,224
Պահեստամասեր	21,815	51,133
Շինանյութեր	207,347	186,799
Անավարտ արտադրանք	482,855	290,250
Պատրաստի արտադրանք	10,110	44,962
Ապրանքներ	3,402	3,158
	733,473	585,665

Ընկերությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրված պաշարներ չունի:

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	583,309	433,482
Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով	99,597	76,262
Տրված կանխավճարներ	23,865	9,235
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	17	18
Դեբիտորական պարտքերի պահուստ	(96,330)	(103,671)
	610,458	415,326

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	45
Բանկային հաշիվներ	735,492	472,355
	735,492	472,400

9 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանոնադրական կապիտալ	6,880	6,880
	6,880	6,880

Կանոնադրական կապիտալը կազմում է 6,880 հազ. դրամ անվանական արժեքով մեկ բաժնեմաս:

Ընկերությունը 2023թ. հայտարարել է 100,000 հազ. դրամ շահաբաժին:

10 Ֆինանսական վարձակալություն

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Լիզինգ				
Լիզինգ	36,021	-	91,999	-
Չկրած տոկոսային ծախսեր	2,820	-	(24,578)	-
	38,841	-	67,421	-

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր գնումների գծով	676,775	467,598
Ստացված կանխավճարներ	2,600,542	2,616,737
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	98,760	116,772
Աշխատավարձի գծով պարտք	29,948	21,736
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով	83,078	37,500
Կրեդիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով	6,840	8,125
Այլ կրեդիտորական պարտքեր	206	95,669
	3,496,149	3,364,137

12 Հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքների կատարումից հասույթ	3,524,859	2,723,757
Արտադրանքի, ապրանքների վաճառքից հասույթ	290,065	244,969
Ծառայությունների մատուցումից հասույթ	139,320	170,876
	3,954,244	3,139,602

13 Այլ եկամուտներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալությունից եկամուտ	6,542	55,145
Կասկածելի դեբիտորական պարտքերի կորստի հակադարձումից եկամուտ	7,341	-
Լիզինգի տոկոսագումարի սուբսիդավորումից եկամուտ	799	1,846
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	292	12,646
Նյութական վնասի փոխհատուցումներից եկամուտներ	14,479	315
Այլ եկամուտ	98	15,058
	29,551	85,010

14 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	184,416	152,996
Վաճառված ապրանքների ինքնարժեք	7,339	11,037
Կատարված աշխատանքների ինքնարժեք	3,002,962	2,437,193
	3,194,717	2,601,226

15 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	86,844	63,092
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	93,166	113,714
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	96	88
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	8,595	13,322
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	495	-
Բանկային ապահովագրական ծախսեր	596	9,025
Չփոխհատուցվող հարկերից և վճարներից ծախսեր	57,417	33,081
Այլ ծախսեր	9,724	3,739
	256,933	236,061

16 Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծախսեր տույժ, տուգանքներից	10,115	3,621
Կասկածելի դեբիտորական պարտքերի կորուստից ծախսեր	-	103,671
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	-	12,646
Այլ ծախսեր	75,067	29,784
	85,182	149,722

17 Ֆինանսական ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսի կապիտալացումից եկամուտ	-	-
Վարկերի տոկոսային ծախսեր	-	1,503
Վարկերի չկրած տոկոսային ծախսեր	-	-
Ֆինանսական վարձակալության տոկոսային ծախսեր	2,406	-
	2,406	1,503

18 Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	(166)	(152)
Վարկեր, ֆինանսական վարձակալություն	(1,301)	2,331
Կրեդիտորական պարտքեր	(7,365)	9,352
	(8,832)	11,531

19 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	89,315	67,878
Հետաձգված հարկ	1,322	(18,661)
	90,637	49,217

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	435,725		247,631	
Շահութահարկ 18% (2022թ. 18 տոկոս)	78,431	18	44,574	18
Չնվազեցվող ծախսեր	12,207	2.80	4,644	1.88
Շահութահարկի գծով ծախս	90,637	20.80	49,217	19.88

20 Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	583,309	433,482
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	735,492	472,400
Տրված փոխառություններ	31,593	24,180
	1,350,394	930,062

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փախառություններ	-	5,455
Ֆինանսական վարձակալություն	106,262	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	676,775	467,598
	783,037	473,053

21 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

21.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժութի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է դրամակն միջոցներից, վարկերից, ֆինասնական վարձակալությունից, առևտրային կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:
Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:
Ընկերությունն ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված 2023թ.	Հայկական դրամ	ԵՎՐՈ	ԱՄՆ դոլար	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	583,309	-	-	-
Տրամադրված փոխառություն	31,593	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	735,473	-	7	12
	1,350,375	-	7	12
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-
Ֆինանսական վարձակալություն	30,602	-	75,660	
Առևտրային կրեդիտորական պարտքեր	617,105	-	59,670	-
	647,707		135,330	-
Զուտ արդյունք	702,668		(135,323)	12

Հոդված 2022թ.	Հայկական դրամ	ԵՎՐՈ	ԱՄՆ դոլար	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	433,482	-	-	-
Տրամադրված փոխառություն	24,180	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	472,388	-	-	12
	930,050		-	12
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	5,455	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	421,537	-	46,061	-
	426,992	-	46,061	-
Զուտ արդյունք	503,058		(46,061)	-

Ընկերությունը ենթարկվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի

հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու,գլոտի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	(13,532)	(4,606)	-	-	1	-

22 Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

23 Պայմանականություններ

23.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

23.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

23.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարընթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

23.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենդրության մեկնաբանություններն ապագայում են կարող են էական պարտավորություններ առաջացնել:

23.5 Դատական հայցեր

2023թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

23.6 Երաշխավորություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի տրամադրված երաշխավորություններ:

24 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ.Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:

Ռուբլու արժեզրկումը ռուբլով արտահայտված դրամական փոխանցումների վրա էական ազդեցություն չի ունենա: Փոխարենը դա կազդի այդ փոխանցումների դոլարային արտահայտության վրա: Բնականաբար ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական փոխանցումները որոշակիորեն կնվազեն: Պատմականորեն ՀՀ տնտեսությունը մի քանի անգամ բախվել է նման ցնցումների հետ: Ի տարբերություն նախորդ ժամանակների, ներկայումս Հայաստանի տնտեսությունը շատ ավելի քիչ է կախված դրամական փոխանցումների ծավալներից, իսկ ՌԴ կշիռը այդ դրամական փոխանցումներում զգալիորեն ավելի փոքր է: Կարծում ենք, որ դրամական փոխանցումների որոշակի կրճատումը բացասական կազդի ՀՀ ներքին պահանջարկի վրա, սակայն այդ ազդեցությունը գնահատում ենք ոչ շատ մեծ:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

25 Գործարքներ կապակցված կողմերի հետ

25.1 Գործարքներ մասնակիցների հետ

Ընկերությունը վերահսկվում է մասնակիցների կողմից:

Հազար դրամ	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2023թ.		Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Ստացած փոխառություններ	-	(3,898)	2,998	900
Առհաշիվ գումարներ	-	(95,511)	10	95,501
Շահաբաժիններ	83,079	(54,421)	100,000	37,500
Կրեդիտորական պարտքեր վարձակալությունների գծով	-	(12,267)	10,667	1,600

	Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2022թ.		Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Ստացած փոխառություններ	900	(1,500)	2,100	300
Առհաշիվ գումարներ	95,501	-	95,501	-
Շահաբաժիններ	37,500	(214,600)	200,000	52,100
Կրեդիտորական պարտքեր վարձակալությունների գծով	1,600	(9,067)	10,667	-

25.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	13,500	13,671
	13,500	13,671